


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 ձր.
Վեցամսեայ . . 6 " "
ԱՐՏԱՍՏԱՄԱՆ
Եւ իւր թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 ձր.
Վեցամսեայ . . 7 " "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլ.ար
Վեցամսեայ 1.50 " "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Վ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Լ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ Ի ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Revue du journal
"Iravounk"
VARNA (Bulgarie)
Редакция
на ВѢСТНИКЪ
"Иравункъ"
ВАРНА
Գրութիւնք եւ
յեւ տրուիր

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ մեր գործակալներէ,
բարեկամներէ ու յաճախորդներէ որ
հաճին գրելու, ծախսած լրագրիսե-
րու եւ բաժնեկիներու հաշիւները
փութով դրել մեզ:

ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Յեղափոխական հրապարակի
վերայ գոյութիւն ունեցող այլ և
այլ առանձին առանձին մար-
միններէ կա՛մ կուսակցութիւն-
ների մէջտեղից վերացնելը և
նրանց վերածելը ընդհանուր և
մի Յեղափոխական մարմնի, օժ-
տուած մի ծրագրով, այսինքն
մի ընդհանուր նպատակով և
գործունէութեան մի ուղղու-
թեամբ (տակտիկա), ուրիշ խօս-
քով, ընդհանուր Հայ Յեղափո-
խական Միութեան գաղափարը,
մենք հրապարակ նետեցինք ոչ
որպէս նորութիւն—այդ չէինք
կարող անել, արուած լինելով
այդ գաղափարի ծագման հետ-
թիւնը յեղափոխական սոսկալէզի
վերայ—, այլ որպէս անհրաժեշ-
տութիւն, և այդ ոչ որպէս երկ-
րորդական կամ երրորդական
անհրաժեշտութիւն, որի հետ
կարելի էր ներքին թեթեւու-
թեամբ, ներքին զանցառու-
թեամբ վերաբերուիլ, այլ որ-
պէս ամենաէական, ամենաառա-
ջին կարգի անյետաձգելի և ան-
միջական անհրաժեշտութիւն
հայկական ընդհանուր կեանքի
մէջ ընդհանրապէս, հայկական
յեղափոխական կեանքի մէջ մաս-
նաւորապէս:

Հասարակական հարցեր քննե-
լիս, հասարակական հարցեր
լուծելիս, հասարակական մար-
դու առաջին սրբազան պարտա-
կանութիւնը այն չէ որ նա գի-
տենայ կա՛մ վեր հանէ թէ տըր-
ուած հարցը ո՛րքան հին է կա՛մ
ո՛րքան նոր, այլ այն որ գի-
տենայ թէ այդ հարցը ո՛րքան
կարեւոր է, ո՛րքան անհրաժեշտ
է ներկայանում տրուած պայ-
մաններում, և թէ նրա յաջո-
ղութեամբ լուծուելուց որպիսի

բարիքներ կարող են առաջանալ
և որպիսի չարիքներ կարող են
վերացուել այն հասարակութեան
վերաբերմամբ, որի համար և ո-
րի ծոցում նա կոչուած է գոր-
ծելու:

Այդ է լինելու հասարակական
մարդու առաջին նախնական
պարտականութիւնը և ոչ ուրիշ
բան: Երկրորդական, կոլմալի
հանգամանքները նրան չեն զու-
ղեցնելու, կա՛մ շատ քիչ և հե-
ռուից, այլ այն ինչ առաջինն
է, այն ինչ զլիաւորն է, ինչ
կենսականն է և ինչ անմիջապէս
անհրաժեշտը:

Լաւ ուրեմն, այդ տեսակէտից
նայելով խնդրին վերայ, մենք
համարձակու՛մ ենք ասել, մենք
համարձակու՛մ ենք յայտարարել,
քանի որ այդ մեր համոզումն է,
քանի որ այդ մեր, մեր կար-
ծիքով, անսխալ տեսութիւնն է,
և հակառակ շատերի, որոնց
գոյց է փոքր ինչ անհանգստացը-
նէ մեր այդ յայտարարութիւնը,
որ հայկական և յեղափոխական
ներկայ պայմաններում ընդհա-
նուր Հայ Յեղափոխական Միու-
թեան գաղափարը ամենաառա-
ջին, ամենաանմիջական, ամե-
նատիրապետական հարցն է՝ որ
գրուած է Հայ ժողովրդի, բայց
մասնաւորապէս Հայ Յեղափոխա-
կան գործօն և կրօնարական գե-
ղատարող բոլոր կուսակցութիւն-
ների առաջ, հարց՝ որը նրանք—
ժողովրդը և Յեղափոխական—
պարտաւոր են միասին անպայ-
ման և անյապաղ լուծել, և լու-
ծել յաջողութեամբ, այսինքն
այնպէս որ վերանայ մէջտեղից,
գաղափար ընդ միշտ կուսակցու-
թիւնների միմեանցից անկախ,
միմեանցից անշատ, միմեանցից
տարբեր ուղղութեամբ և շատ
անգամ, ի՞նչ ենք ասում, գրե-
թէ միշտ, միմեանց հակառակ և
միմեանց ոչնչացնելու ձգտող և
երբեմն նոյն իսկ այդ միակ նը-
պատակին նուիրուած գործունէ-
ութիւնը:

Յեղափոխական այլ և այլ ոյ-
թերի միջև մի ընդհանուր Մի-
ութեան և համերաշխ ու ներ-
դաշնակ գործունէութեան ան-

հրաժեշտութիւնը նոր չէ որ
զգացում է: Այդ հարցը գրուե-
ցաւ յեղափոխական սեղանի վե-
րայ շատ կանուխ, հէնց սկզբից,
դեռ այն ժամանակից, երբ մի-
մեանցից տարբեր կէտերի վե-
րայ, գրեթէ միաժամանակ,
ծնունդ առին հայկական նորա-
գոյն կեանքի մէջ առաջին գործ-
նական յեղափոխական շրջանա-
ները: Միութեան գաղափարը
նրանց յետոյ ամենեւին դադար
չառաւ ժամանակ ժամանակ նոյն
իսկ բուն կերպով բռնկուելուց,
արծարծուելուց, ա՛յս կէտի վե-
րայ, ա՛յն կէտի վերայ, այս կամ
այն կուսակցութիւնների մէջ
մասնաւորապէս, յանգելով, դժ-
բաղդաբար, գրեթէ ամեն ան-
գամ, բացասական արդիւնքի:
Հնչակեան և Դաշնակցական Մի-
ութեան առաջին անյաշող փոր-
ձը, Դաշնակցական և Վերակազ-
մեալ Հնչակեան քանիցս ընդ-
հատուած և նորից ձեռք առ-
նուած Միութեան անյաշող փոր-
ձերը և վերջապէս, Հին և Նոր
Հնչակեան մէկ մէկուց անշա-
տուած հատուածների վերջին կար-
ճատեւ Միութիւնը, այդ բոլորը
ուրիշ բան չեն ազատուցանում,
բայց եթէ այն որ Միութեան
անհրաժեշտութիւնը զգացուած է
հէնց սկզբից, շարունակել է
զգացուիլ և զգացում է մինչև
այսօր յեղափոխական շարքերի
մէջ, հակառակ ամեն թշնամա-
կան, ամեն հակադրական զգա-
ցումներին, որոնցով տողորմած
են նրանք միմեանց դէմ:

Միութեան գաղափարի այդ
փորձերը, որքան էլ տխուր ի-
րենց ցաւալի և բացասական
վախճանով, ամենագեղեցիկ, ա-
մենախալուն արտայայտութիւն
են, սակայն, այն խոր զգացման,
այն խոր համոզման ու առողջ
մտածութեան, որի համեմատ
կուսակցութիւնները իրե՛նք էլ
զգում են, իրե՛նք էլ ըմբռնում
են և խոստովանում, եթէ միայն
չեն կուրացած կուսակցական մո-
լեռանդութեամբ և անհասկանա-
լի յանձնադատականութեամբ,
ինչպէս այդ տեսնում է շատ
անգամ, որ, առանց ընդհանուր

միութեան, առանց համերաշխ
ներդաշնակ և համաքաղաք մը-
տածուած գործունէութեան, ո-
չինչ չի լինի, ոչինչ չի իրակա-
նանայ այն մեծ գաղափարներից,
այն մեծ նպատակներից, որոնք
կաղաւթ են նրանցից իւրաքան-
չիւրի, ամենի, գոյութեան ի-
րաւունքը:

Այս պարզ է և ոչ կարօտ եր-
կար բացատրութեան:

Բայց Ընդհանուր Միութեան
անհրաժեշտութիւնը ոչ մի ժա-
մանակ այնպէ՛ս զգալի, այնպէ՛ս
անմիջական եղած ու գրուած չէ
Յեղափոխական առաջ, ինչպէս
ներկայ րոպէսում, ինչպէս ներ-
կայ հայկական պայմաններում:
Նա, այդ Ընդհանուր Միութեան
հարցը, նոյն իսկ դարձած է մի-
ակ առաջնապէս և գերազանցա-
պէս լուծուելիք հարցը, որից
կախուած են, որի լուծման սպա-
սում են ուրիշ բազմաթիւ յեղա-
փոխական ամենակարեւոր, ամե-
նակենսական հարցեր, որոնց
իւրաքանչիւրը առանց որի ոչ
պայման է հանդիսանում նպա-
տակի իրագործման:

Այն ժամանակ, երբ դեռ հայ-
կական պայմանները չէին զար-
գացած ու բարդուած ընդհա-
նուրապէս այնպէս, ինչպէս մենք
տեսնում ենք նրանց այժմ, այն
ժամանակ, երբ յեղափոխական
ընդհանուր շարժումը ինքը և
մասնաւորապէս առանձին առան-
ձին կուսակցութիւնները չէին
ստացած այն զարգացումը, այն
ծաւալը՝ ըստ քանակութեան, և
այն գաղափարային ու կազմա-
կերպական կարծրութիւնը, խըս-
տութիւնը՝ ըստ ուղիւի, կուսակ-
ցութիւնների ուրոյն գործունէ-
ութիւնը, որքան էլ փաստաբե-
ր և ազետալի, այնուամենայնիւ,
չարիքները չէին կարող ունենալ
այն սահմանը, որից այն կողմը
նրանք այլևս կգառնան վտան-
գաւոր, մահացու: Հասած այդ
սահմանին՝ կ'առակցութիւնները
կախալ ակամայ, իրերի բնական
բերմամբ, այլ եւս կը դադարին
լինելուց նպատակայարար: Հա-
սած այդ սահմանին՝ նրանք
կլինին պարզապէս և ուղղակի

վերջացած է , Ձեզմէ հնորակալ ենք ,
բայց ալ Ձեր բարի արամագրութիւն-
ներուն պէտք չկայ : Եւ այս զիւստ-
գիտական վարպետութեան կը գիտնան
այն յոյսով թէ Պուլկար կառավարու-
թիւնը պիտի ճնշէ Մակեդոնական Գո-
միթիւնէն ու քննարկէ զանոնք :

Բայց միայն Մակեդոնիոյ Բրիտտո
նէից հետ չէ որ Ապտիւլ Համիտ կոի-
ւի մէջ կը գտնուի : Բարենորոգմանց
մէջ բառը դործադրութեան զրուած
պարագային հաւատացեալ Արպանացի-
ներն ցցուեցան եւ յայտարարեցին թէ
եթէ կեւալ չեմք ինքնալ ըտեթիւն
ստանան , ինչ որ վերջ պիտի գտնուի
զրուածն ուրիշ գործեր իրենց իրենց
թոյլ արուէր առանց աշխատանքի ապ-
րել , իրենք ալ պիտի պահանջեն ան-
կախ Մակեդոնիոյ կազմութիւնը :

Այս պայմաններուն տակ Սուլթանը
չը դիտարկէր այլեւս որ ժողովրդին հա-
ւատալ , ուրեմն ձմեռը պիտի անցնի
հակա-բանակցութիւններով : Կարնան
բան մը կատարուած չպիտի ըլլայ , եւ
առաւել քան երբեք Մակեդոնիոյն ա-
րեւելի աշխարհի մը պիտի ըլլայ :
Նաեւ բոլոր ազատ մասնաճիւղերը , ո-
րոնք բաւերով ինքզինքին չեն ուզեր
խաբար կը հաւատան թէ Մակեդոնիոյն
տակէ երկու տարի վերջ իրաւուն հա-
մար կորուած պիտի ըլլայ :

Յոյն թիւթերը կը շարունակեն յա-
ւանդու թէ իրենց ցեղը Մակեդոնիոյ
քրիստոնէից մեծամասնութիւնը կը
կը կազմէ , ինչոր իրականութեան հա-
կառակն է : Էւ իրենց անոնց հոս
յիշեցնել թէ Մուհամմէտ Բ . Կ . Պոլիս
առած ատենը , յալթողը գիտցաւ թէ
Պոլիս պատրիարքը օրթոքսան հաս-
տիսութեանց պետն է : Իրաց այս վի-
ճակին հնորէն Պալատին սլաւ ժողո-
վուրդները իբր յոյնը նկատուեցան
յաղթողներու կողմէ :

Միայն 19 ըր . դարու վերջին կէսին
մէջ անոնք վերստինալով իրենց ցե-
ղային զգացումը , սկսան կոռել ֆե-
նէրի Պատրիարքարանին դէմ որուն
եզրիսպարները , իրենց հոգեւոր եւ
առեւտարական պետերը միայն հար-
տանալ կը ջանային անոնց հաշտել :

1870 թն Պուլկար Էքզարքարանին
հաստատուելը զանգակի առաջին ձայնը

եղաւ որ արթնացուց Մակեդոնիոյ սլաւ-
ները ասոնց ներքինից իրենց ազգային
զգացումը : Պուլկարներուն հետեւէն
Սերպերը եւ Գուրգո — Վալաքիները բա-
կան ֆէնէրի դէմ կոռել ու պահան-
ջել իրենց քաղաքական եւ եկեղեցա-
կան ինքնավարութիւնը :

Վարժարաններ լսանալու համար Գու-
նէն արտոնուած ըլլալով , աշխարհի
նորոյն եկեղեցիներ հաստատուելու հա-
մար կը կոռելին Պոլիս Պատրիարքա-
րանէն անկախ ըլլալու եւ իրենց ազգը
թուրքին պաշտօնապէս ճանչցնելու
նպատակաւ : Այս միջոցին միայն կա-
րելի է յատկաւ հաստատուել թէ Յոյն-
ներու ըսածներուն հակառակ , Մակե-
դոնիոյն մեծաւ մասամբ Սլաւ է
եւ Յոյնները քրիստոնէի ժողովուրդ-
ներու մէջ թուով էն վերջը կուգան :

Այս ճշմարտութիւնը ծածկելու հա-
մար Յոյնները ամէն միջոց ի գործ կը
դնեն եւ անձնուէր օժանդակներ կը
հանգիստան թուրքներուն : Թուրք
զօրքերէն զրաւուած Պուլկարը զիւղե-
րուն մէջ կը անսնուի Յոյն եպիսկո-
պոսը զապիթիէնի շրջապատուած , եր-
գում կանոնին ժողովուրդէն որ սարա-
ված զինուորներու ներկայութեան կրօ-
նական սկոկընդներ ֆէնէրի զրկուած
յոյն եպիսկոպոսը : Այս կերպով կը
ջանան ժողովրդական մէջ Պուլկար
ներու թիւրքաւարները եւ Հիւլէններու-
նը աւելցնել : Այժմ այդ եղանակով հե-
լեւորացած Պուլկարներու թիւը տասը
հազարի մօտ է :

Ապստամբութիւնը սկսելէն առաջ
պուլկար վարժարաններու թիւը 323 ի
կը հասնէր , այսօր միայն վերջը ըլլալու-
նակէ : Էքզարքան բողոքելով վրայ Գուրգո
պատասխանեց թէ պատրաստ է վար-
ժարաններուն վերադարձը արտօնելու
Նոյն իսկ պատրաստակամութիւն ցոյց
կուտայ 17 նոր վարժարաններ ալ բա-
նալ արտօնելու , հաւանաբար սա պայ-
մանաւ որ ուսուցիչները իրենց օրինա-
պահութեանը համար երկու երաշխա-
ւորներ տան զիւղին երեւելիներէն ,
Այս երաշխաւորները պատասխանատու
պիտի ըլլան ուսուցիչին ամէն գործե-
րուն եւ շարժումներուն հանդէպ կա-
ռավարութեան :

Այս պայմաններուն տակ մէկը չպի-

տի զոնուի այդ դերը ստանձնելու ,
ուսուցիչները եւ երեւելիները Թուրք
պաշտօնականներու ձեռքը խաղալիք պի-
տի ըլլային :

(Կաղաւթ Էսօրթեհէ)

ԹՂԹԱՎՅՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍՉՈՒՄ , 2) Նոյնի . 1933

Ամսոյս 19 թն ժամը 9 թն քանի մը
անձնատուրութիւններ կանչուած էին
օւղեւոյն Կաղաքինիք Դատաւորին քով
կարգ մը վկայութիւններ ու լուսարա-
նութիւններ աւուր Ստեպար եւ ֆո-
թիւ մէջ Գ . Չարձիւնար եւ Շահնի
վրայ կառարուած ոճրներուն համար :
Աճապարհութիւնն առաւ հարցաքն-
նութիւններուն մանրամասնութիւնները
խոշոր անալիզի մէջ ամփոփուած Ռուս
կառավարութեան կողմէ ուղղարկուած
է Կաղաք . Սրաւքին գործող նախա-
րարութեան միջոցաւ այս աղի հար-
ցաքննիչ Դատաւորին :

Ճիշդ ժամը 9 թն սկսան հարցաքն-
նութիւնները , իւրաքանչիւր վկային
հարցաքննութիւնը 2 1/2 ժամէ աւելի
տևեց : Այս հարցաքննութիւննե-
րէն ստեղծմանը վրայ հիմնուելով
բացարձակապէս այլեւս յայտնի կը լի-
նի թէ այս երկու ոճրներն ալ Հին
Հ . Կաղաքի կառավարութեան Կոնստի-
նտնուպոլ գործուած են :

Գ . Չարձիւնար եւ Շահնի իբրեւ ի-
րենց կուսակցութեան հակառակ Պրո-
պագանդիստներ մահուան պատժ-
գատապարտուած են Լճուտի գործի-
թէի կողմէ , ու այս վճիռն գործադրե-
լիս հրաման տրուած է Ռուսաստա-
նի քովիէներուն , որոնք զայն գործա-
դրած են : Ահաւարիկ այսպէս խոս-
տովանած են ոճրագործները իրենց հար-
ցաքննութեանց մէջ :

Ռուս կառավարութեան առջեւ բո-
լորովին պարզուած են մ. ր. Աղգ . յեղ .
գաղանիքները , այնպէս որ վկանե-
րուն զարմանք պատճառած է այստեղի
հարցաքննիչ Դատաւորին քանի մը բա-

րութիւնները , թէ ինչպէս 1897 թն
Հին . Կուսակցութիւնը բաժնետէս է
Հին եւ Նոր Հնչակեան անունը Բովա-
նալներ Սոսիալիզմով յի . Կուսակ-
ցութիւն , իսկ երկրորդը մի միայն
զուտ ազգայնական յեղ . Կուսակցու-
թիւն :

Գ . Չարձիւնար հիմնադիր եղած է
Ամերիկայի մէջ Տիգրիս Զայն Հայրեն-
եաց թերթերու , ու կարող գործիչ մը
նոր Հնչակեան կուսակցութեան 91-ին
Շահնի Թուրքիոյ մէջ շատ մը հերո-
սութիւններ ըրած է , որոնց համար
շատ յարգուած է իր հայրենակիցներէն :
Վերջապէս Ռուս կառավարութեան
յայտնի եղած են թէ այս ոճրները
ինչ պատճառաւ գործուած են , եւ ո-
րոնք են հեղինակները :

Ռուսներու այս երկու գործերը Ամ-
երիկեան հայտաւարութիւն կը կրեն ,
Ռուսաստանի Ամերիկեան Դեսպա-
րի վկայութիւնները հարկ եղած են ու-
ղուի այս անձնատուրութիւններուն հա-
մար : Վկաները ինչ որ պիտեն , ու
ինչ որ իմացած են ասոնց մասին , ա-
նաչառ կերպով յայտնեցին Դատաւո-
րին ու աւելելն Հին Հնչակեանները
այն ոճրները անհասկերու կը վերա-
գրեն : Բայց անոնց սուտերը կուլ
տուող չի չկայ այլեւս . սօքրոմէնե-
րը ու ֆալսիւները կը խոսին ու կը հաս-
տատեն անոնց այս ոճրները :

Սեյրան

ԱԶԳԱՅԻՆ

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՆՈՐԸՆՈՒՐ Առաջ-
նորդ Տ . Ներսէս եպիսկ . Առաջ-
եան , որ այժմ Պոլիս կը գտնուի ,
նամակ մը ուղղելով Պատրիար-
քին , խնդրած է որ իր ուղեւո-
րութեան համար հարկ եղած
կաղաքութիւնները կատարուին
օր առաջ եւ պէտք եղածը հա-
ղադուի Տ . Վահան Վ . Յակոբ-
եանի : Յայտնած է նաեւ թէ

ԱՐՄԵՆ ՇԻՏԱՆԵԱՆ

ՁԻԼԵԹ...

Գ

« Երէկ առաջին անգամն ըլլալով Ռէչատ պէյի ը-
սած ընտանիքը գտնուել զացի : Պէշիկ-Թաշ կող-
ուած արուարձանին մէջ սքանչելի դերով տուն
մըն էր այդ տունը : Դուրսը քանի մը անգամ զար-
նակէ կտար , սպասուէի կին մը ներսէն հարցուց :

— « Ո՞վ է այն :

— « Բաղէ՛ք , միմիկցի :

« Նամէհրամ , զաւակը կիսովին բացաւ դուռն ու
նորէն հարցուց .

— « Ի՞նչ կուզէք :

— « Աղան տունն է , ըսի զողջալուով :

— « Ձե՛ . Աղան ու Հանրմը Ալէմ-Տաղի գացած են :

— « Եստոնց է :

— « Հազիւ շարժի մը կայ :

— « Միմիկ Աղան ու Հանրմը գացած են :

— « Պզտիկ Հանրմը ալ հետեւին է :

— « Ենորհակալ եմ . . . թո՛ղ ջր ու հեռա-
ցայ :

« Կէս օրը ժամ մը անցած էր :

« Առանց վայրկեան մը համիւրելու , ուղղակի
Ալէմ Տաղի գացի , որ թուրքերու սիրած ամարա-
նոցն է : Վերջապէս ասուն էր . բլուրի մը ստոր-
տը խուճի խուճի թրքուհիներ լիցուած էին , որոնք

իրենց մետաքսայեա ու ծանրազին ֆէրաճներու
տակ թրթուռն հուրի մը կը նմանէին : Կամայ
համայն գէպի այդ բլուրը յառաջացայ : Աչքս չորս-
ղին կը պտտուէի յիմարի մը պէս :

« Ժամ մը թափառեցայ : Ֆէրաճներու տակէն ե-
րեցող զէմքերու մէջ չը կար նայուածք մը որ զիս
իւրն քաշէր : Ա՛խ , արեւը ձայն ունի :

« Մուծը կոխած էր . հուրիները կը վերադառնա-
յին : Յանկարծ աչքիս զարկաւ հետեւէն հետեւ ե-
րեցող խուճի մը , որ կը քաղկանար երեք հոգիէ :

« Աստուած իմ . . . ոտքերս կիթուել սկսան ու
բոլոր մարմինս փուշ փուշ եղաւ :

« Իսկոյն թողուցի ճամբաս եւ ուղղակի անոնց
կողմը գացի : Երբ քաւակն մօտեցայ , նիւտուցի որ
ծերունին ճիշտ Ռէչատ պէյի նկարագրած անձն էր :

« Մէկէն ի մէկ չը համարձակեցայ ներկայանալ . . .
այլ կիթուած քայլերովս հետեւեցայ այդ խուճիին ,
որուն մէջ սրտիս , հոգիիս ու բովանդակ էութեանս
հետ կապուած մէկը կար : Ա՛խ , կը քայլէր ան , կը
շարժէր , ֆէրաճէն մէկդի կանգնէր ու նորէն կամ-
փոփէր ինքզինքն անոր մէջ , առանց գիտնալու թէ
իր թշուառ հայրը հանդուրժելու , համբերելու եւ
միտնաբանին իր ճիշդ զսպելու ոյժը չուէր :

« Ու կը յայտէ՛ր . . . ա՛խ , կը նայէի անոր բարձր
հատակին , անոր գերդ կազմուածքին , անոր աղուոր
մերուն զլիւնն ու միմիկի ոտքերուն . . .

« Բնութիւնը կը գողար ոտքերուս տակ ու շուրջս
բան մը չէր երեւար անկից գատ :

« Վէլի աղա , — այս էր այդ ծերունիին անունը
զոր յաւանած էր ինծի Ռէչատ պէյ , — Ալէմ-Տաղի
բարձանց վրայ զեղեցիկ տուն մը ունէր , որուն առ-

ջին կը տարածուէր այգի մը՝ պողատու ծառերով
զարդարուած :

« Դ . զղալով բացի դուռը եւ ներս մտայ : Սպա-
սաւոր մը մօտեցաւ ինծի ու հարցուց թէ ո՞վ կու-
զէի :

« — Վէլի աղա տեսնել կուզեմ , պատասխանեցի :

« — Աղէ՛կ , բարեկա՛մա , զիչերով կըլլայ մի՛ :

« — Կարեւոր խնդիր մը կայ . . . այդ պատճառաւ
չեմ կրնար թողուլ վաղուան : Կը խնդրեմ , իմաց
տուէք իրեն :

« Իպասաւորը վեր դնաց ու քիչ յետոյ վերադա-
ճաւ :

« — Վե՛ր հրամեցէք , միմիկցեց սպասաւորը :

« Յուզուած ու ինքնիրմէս եղած վիճակով մը Վէ-
լի աղային ներկայացայ ու բացաբանեցի :

« — Ներեցէ՛ք ինծի որ ասա՛նկ գիչերով անհան-
գիստ կրնեմ ձեռք :

« — Վնաս չըկայ . . . Նստեցէ՛ք նայիմ , ընդհա-
նեց Վէլի Աղա՝ տարօրինակ նայեալք մը նետելով
վրաս : Ի՛նչ է ցաւդ , ո՞վ է ք . . . Ի՛նչ կուզէք ը-
սել :

« Ո՛հ , մէկէն իմէկ լիզուս բռնուեցաւ . . . հոգ-
ւոյս դառնութիւնը պոթիկաց ու աչքերս լեցուե-
ցան : Երթունքներս կը գողային . . . Կարճեցի թէ
տունը կը բլէր վրաս :

(Շարունակելի

